ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ

Գարրի Գարիկի Գասպարյանի «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02– «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Օդի աղտոտումը համաշխարհային խնդիր է, որը գնալով ավելի է սրվում: Այն հանդիսանում է կլիմայի գլոբալ փոփոխության, հանրային առողջության վատթարացման ու բարեկեցության անկման, շրջակա միջավայրի քայքայման հիմնական պատճառը: Մթնոլորտային օդի պահպանության խնդիրը սուր կերպով է արտահայտված նաև Հայաստանի Հանրապետությունում: Ըստ ՄԱԿ–ի հրապարակած տվյալների Հայաստանի մթնոլորտային օդի աղտոտվածությունը 6.8 անգամ գերազանցում է ԱՀԿ–ի կողմից սահմանված ցուցանիշը, արդյունքում մթնոլորտային օդի աղտոտմամբ պայմանավորված կորուստները հանրապետությունում վերջին տարիներին համարժեք են եղել ՀՀ–ի ՀՆԱ–ի 11%–ից ավելիին: ՀՀ-ում անկախացումից ի վեր մթնոլորտային օդի պահպանության բնագավառում ձևավորվել և բանեցվում է որոշակի տնտեսական կառուցակարգ: Սակայն, հաշվի առնելով մթնոլորտային օդի աղտոտմամբ պայմանվորված հանրապետությունում առկա էկոլոգատնտեսական պատկերը, ինչպես նաև մթնոլորտային արտանետման անշարժ աղբյուրներից անջատվող վնասակար նյութերի որսման խիստ ցածր մակարդակը և արտանետումների աճ դրևորելու միտումը՝ ակնհայտ է դառնում՝ մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի արդյունավետության

բարձրացմանն ուղղված քայլերի և միջոցառումների մշակումն ու իրականացումը խիստ արդիական է և հրատապ:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի առկա հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման հնարավոր ուղիների առաջադրումն է: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի տեսամեթոդական հիմունքներն ու առանձնահատկությունները մթնոլորտային օդի պահպանության համատեքստում,
- վերլուծել և հետազոտել մթնոլորտային օդի պահպանության տնտեսական գործիքակազմն ու դրա կիրարկման միջազգային փորձը,
- ուսումնասիրել մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգը և գնահատել դրա ապահոված էկոլոգատնտեսական արդյունքները,
- գնահատել ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների և տնտեսության զարգացման միջև փոխկապվածությունները,
- բացահայտել ավտոտրանսպորտային արտանետումների կարգավորման տնտեսական կառուցակարգի անկատարություններն ու մատնանշել դրանց վերացման հնարավոր ուղիներն ու կառուցակարգի բարեփոխման հնարավորությունները,
- անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների կրճատում ապահովելու նպատակով առաջադրել գործադրվող տնտեսական կառուցակարգի կատարելագործման ճանապարհային քարտեզը և ուրվագծել կառուցակարգի զարգացման առաջնահերթությունները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:Ատենախոսությունը շարադրված է 130 էջի վրա՝ առանց հավելվածների:

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները, ատենախոսության արդյունքների գիտական և գործնական կիրառական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «**Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի տեսամեթոդաբանական հիմնահարցերը**» գլխում ներկայացվել են շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի էությունը, դերն ու առանձնահատկությունները, ընձեռած առավելություններն ու հնարավորությունները մթնոլորտային օդի պահպանության համատեքստում: Այս գլխում անդրադարձ է կատարվել նաև մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի գործիքակազմին ու դրա կիրարկման միջազգային փորձին:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության գործող տնտեսական կառուցակարգը և դրա արդյունավետության գնահատումը»** գլխում վերլուծվել է մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգը, դիտարկվել են մթնոլորտային օդ արտանետումների շարժընթացները և դրանք պայմանավորող հիմնական գործոները,հասարակության բավարարվածության մակարդակը մթնոլորտային օդի որակով, զննության են առնվել բնապահպանական միջոցառումների պետական ֆինանսավորման իրավական կարգավորումն ու ծավալները, ներկայացվել է մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված նյութական խրախուսման ազգային փորձը և դրա ապահոված արդյունքները: Նաև գնահատվել են

ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների և տնտեսության զարգացման միջև փոխ-կապվածությունները:

Ատենախոսության երրորդ՝ **«Մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի բարեփոխման գերակայությունները ՀՀ-ում»** գլխում ներկայացվել են մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի հիմնախնդիրները, ինչպես նաև ուրվագծվել են մթնոլորտային օդի պահպանության գործող տնտեսական կառուցակարգի զարգացման առաջնահերթությունները: ՀՀ-ում ավտոտրանսպորտային արտանետումների համար բնապահպանական հարկման ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մարդատար ավտոտրանսպորտային միջոցների բնապահպանական հարկի գործող մեթոդաբանությունը չի ապահովում էկոլոգիական գործոնի արդյունավետորեն հաշվառում՝ պայմանավորված բնապահպա-նական հարկի ըստ ավտոտրանսպորտային միջոցի շարժիչի հզորության հաշվարկ-ման: Ըստ արտանետումների ցուցանիշների բնապահպանական հարկի սահմանումը դիտարկելով որպես լավագույն ուղենիշ՝ Հայաստանում որպես միջանկյալ և գործող մեթոդաբանությունից առավել արդյունավետ տարբերակ առաջարկվել է բնապահպա-նական հարկի ըստ շարժիչի աշխատանքային ծավալի սահմանումը, որը առավել նպատակահարմար է էկոլոգիական ազդեցության արդյունավետորեն հաշվառման տեսանկյունից, քանի որ արտանետումների և շարժիչի աշխատանքային ծավալի միջև կապն ավելի ուժեղ է՝ ի տարբերություն արտանետումների և շարժիչի հզորության միջև կապի: Գնաճի հաշվառման տեսանկյունից կարևորվել է նաև բնապահպանական հարկի դրույքաչափի վերանայումը: Թե՛ արտանետման անշարժ, թե՛ շարժական աղբյուրներից մթնոլորտային արտանետումների բնապահպանական հարկման դրույքաչափերը սահմանման պահից ի վեր գնաճի նկատմամբ դրանք չեն ճշգրտվել, ինչի արդյունքում էականորեն արժեզրկվել են: Հաշվի առնելով ազգային տնտեսական առանձնահատկություններն ու հնարավորությունները, ինչպես նաև արտանետումների թույլտվությունների առևտրի համակարգի (ԱԹԱՀ-ի) կիրարկման միջազգային փորձը՝ ներկայացվել է Հայաստանում ԱԹԱՀ-ի տեղայնացման և գործարկման ենթակա տարբերակը:

Ատենախոսությունը եզրափակվում է **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնով, որտեղ ատենախոսական աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ձևակերպվել են ընդհանրական եզրակացությունները և առաջարկությունները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների վրա տնտեսական զարգացման ազդեցությունների գնահատման արդյունքում բացահայտվել են ՀՆԱ-ի և մթնոլորտային օդ արտանետումների միջև առկա փոխառնչությունները:
- Բացահայտելով ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետողների հարկման մեթոդաբանական և համակարգային խնդիրներ՝ առաջադրվել են էկոլոգիական գործոնը արդյունավետորեն հաշվառող բնապահպանական հարկման նոր մոտեցումներ:
- Հիմնավորելով աղտոտման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ արտանետումների կարգավորման տնտեսական կառուցակարգի արդյունավետության բարձրացման հարկավորությունը՝ առաջարկվել է դրա գործիքակազմի կատարելագործման առաջնահերթ քայլերը և մշակվել համալրման գիտափորձնական ժամանակակից մոտեցում:

<u>Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը</u>

Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, ներկայացված գիտական և գործնական առաջարկությունները կարող են օգտագործվել պետական մարմինների կողմից ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերի և համալիր միջոցառումների մշակման գործում, գիտատեղեկատվական հիմք

հանդիսանալ պետական էկոլոգիական քաղաքականության, զարգացման ռազմավարության, էկոլոգիական նորմատիվ իրավական ակտերի ձևավորման և բարեփոխման համար: Ատենախոսության արդյունքները որպես ուսուցողական և տեսամեթոդական նյութ կարող են նաև օգտագործվել բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջակա միջավայրի և դրա տարրերի պահպանությանը նվիրված դասախոսությունների համար, միաժամանակ կարող են արժեքավոր լինել էկոլոգիական խնդիրներով ու դրանց լուծմամբ հետաքրքրվող մասնագետների և ՀՀ քաղաքացիների համար:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Բնօգտագործման տնտեսագիտություն» ամբիոնում, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում, ինչպես նաև գիտնականների և հետազոտողների հետ: Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրապարակվել են 8 գիտական հոդվածներում:

Ընդհանուր առմամբ ատենախոսին հաջողվել է ատենախոսության նպատակին և խնդիրներին համապատասխանող հետազոտություն ներկայացնել: Միաժամանակ աշխատանքում նկատվել են որոշակի թերություններ, որոնք հիմնականում հետևյալն են:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքում, այնուամենայնիվ բացահայտվել են որոշակի թերություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Աշխատանքում հաճախակի են կատարվել հղումներ (գրեթե բոլոր էջերում նշված է 1-4 գրականություն), ընդ որում 1–ին գլխում հղումները մեծամասամբ կատարվել են դասագրքերից, 2–րդ գլխում՝ հարկային օրենսգրքից (126,129,131,154,157,165 և այլն) և վիճակագրական տեղեկագրերից: Արդյունքում ատենախոսությունը ավելի շատ տեսական-տեղեկատվական, քան գիտական հետազոտական բնույթ է ստացել:
2. Էջ 12–ում շրջակա միջավայրի պահպանության կառավարման գործիքակազմում նշվել են միայն վարչական և տնտեսական գործիքները,

իսկ տեղեկատվականը անտեսվել է: Վերջինիս ներգրավումը կարող է խթանել «աղտոտողի», ինչպես նաև հասարակության վարքագծի հետագա փոփոխությունը՝ բարձրացնելով նրանց էկոլոգիական պատասխանատվությունը:

3. Որպես մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի բարեփոխման գերակա ուղղություն ատենախոսը դիտարկել է միայն բնապահպանական հարկի սահմանման մեթոդական մոտեցման վերանայումը՝ առաջարկելով Ղազախստանի փորձը: Սակայն ՀՀ-ի օրինակով հարկի դրույքաչափի (ամսական հաշվարկային ցուցանիշի՝ ԱՀՑ-ի) մեծության որոշման կոնկրետ մեթոդաբանություն չի առաջարկվում: Հետևաբար ատենախոսությունում ներկայացված առաջարկները ավելի շատ հիմնված են ենթադրությունների վրա: Միջազգային փորձի տեղայնացման տնտեսական հիմնավորման նպատակով ցանկալի կլիներ կատարել որևէ հաշվարկ:
4. Ատենախոսը (էջ 95 և 109-ում) արձանագրում է, որ դրույքաչափերի վերանայումից առաջ նախ անհրաժեշտ է լուծումներ տալ ավտոտրանսպորտային արտանետումների կարգավորման տնտեսական կառուցակարգի բացահայտված մեթոդական և համակարգային խնդիրներին: Բայց չեն նշվում դրանց լուծման ուղիները:

Արված դիտողությունները չեն ազդում ատենախոսի կողմից պաշտպանվող դրույթների վրա, պարզապես աշխատանքը կշահեր, եթե այն համալրված լիներ հետազոտական նյութերով:

Եզրակացություն

Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար **Գարրի Գարիկի Գասպարյանի** կողմից հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը արդյունք է հեղինակի ինքնուրույն գիտական հետազոտության:

Աշխատանքում ստացված արդյունքներն ունեն գործնական նշանակություն:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու

արդյունքները, որոնք իրենց արտացոլումն են գտել հեղինակի կողմից հրապարակված 8 գիտական հոդվածներում:

Գարրի Գարիկի Գասպարյանի **«Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսությունը բավարարում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի և թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակ Գարրի Գարիկի Գասպարյանն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ., դոցենտ Ա.Գ. Մատինյան

տ.գ.թ., դոցենտ Ա.Գ. Մատինյանի
ստորագրության իսկությունը հաստատում եմ.
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտական քարտուղար, տ.գ.թ. Ե. Ա.Հակոբյան

13.01.2025թ.